

Երբ վարանէր այս յուզմանց մէջ անել,
Թէ Բնչ ճանապարհ պէտք էր ինք բռնել,
Գրեգորի ու իր եպիսկոպոսին
Միջեւ պայթեցաւ կոհւ մը զայրազին:

Մըխիթար ամէն տարակոյս ի բաց
Թօթափեց ցրուեց, և այն ուղեկցաց
Հետ չուզեց այլ եւս ճանապարհորդել,
Որոշեց նաւէն անպատճառ ելլել:

Եւ Հոն նաւուն մէջ բարեբախտաբար
Կար վաճառական մ' որ պիտի դառնար
Քաղաք՝ նաւուն հետ կապուած նաւակով,
Միխիթար ուզեց ինքն ալ դառնալ անով:

Նաւապետն արգելք չըհանեց բռնաւ,
Արդէն ակամայ նդուներ էր ի նաւ,
Բայց երկու մտերիմ՝ բարեկամներուն
Անշտաման վայրկեանն էր շատ ըզգայուն:

Յովնան Միխիթարայ վիզը պըլլուած
Կը հոսեցընէր հեղեղ մ' արտասուաց.
Ոչ անոր համար որ կը բաժնուէր
Անկէ՝ զոր իրեն անձին պէս սիրէր:

Այլ զի կը ստիպուէր անոր, անպաշտպան
Թողուլ զինքն հիւանդ և յօտարութեան:
Նոյնպէս Մըխիթար արտասուէր, հեծէր,
Այլ անշտուելու վայրկեանն հասած էր:

Իր հրաժարական ողջոյնը տրուաւ,
Վաճառականին հետ քաղաք զարձաւ,
Իսկ անոնք հովուն տուած առագաստին,
Իրենց ճանապարհն յառաջ վարեցին:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

Շարայարելի

ԲԱՆՐԱԳԻՏԱԿ. — Կը հրատարակէ
երկրագործական, գիտական, բժշկա-
կան, անասնաբանական, ազգագրա-
կան յօդոսածներ: Խմբ. Ղ. Բոլլաւտ:
— Գինն է 15 ֆռ.:

Հասցէ H. Polad Rédacteur en chef du
Journal HANRAKIDAK chez M. P. Hazarossian,
19 Eskizabtié Bahdjé-Kapou. 19.
STAMBOUL.

Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵՆԵՑ ՍՅՈՒԳԱՔԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տես էջ 409)

Թուծիաքար

Պ Զ նախենաց՝ այլ նորակազմ բառ
մ'է, զոր Հ. Գալուսի իւր բառարանին մէջ
սեփականած է գղ. Calamine բառին. մինչ-
դեռ Նորայր Նոյն բառին կը սեփականէ Ա-
րուաքար որ նոր շինուած է: Ըստ քիմիա-
կան բաղադրութեան Calamine բառը հայե-
րէն լաւագոյն է կոչել Թուծիաքար վասն զի
Թուծի նիւթը կը պարունակէ: Վերջերս հրա-
տարակուած գրքի մը մէջ այդ եւրոպական
բառը վրիպական կոչուած է նաեւ Չսկա-
սկաթմ, համարելով թէ եւրոպական Calami-
ne և Smithsonite բառերն հոմանիշ են.
յիբաւի առաջ այդպէս կը կարծուէր բայց
ոչ այժմ*. Հայերէն Թուծիաքար բառի ստու-
գարանութիւնն է Թուծիայ կամ Թուծի (գղ.
Tuthie) և քար: Թուծի բառն եւս փխրաւեալ
է պարսկերէն ٲوٲد = Թուծեալ անուէն: —
Այս բառը արար. թրք. և եւրոպական լե-
զուներով համահնչակ է**, Վերջնադարեան
նախենաց ձեռագրաց մէջ Թուծիայի հոմա-
նիշ են նաեւ Անալիս՝ Ծարուր և Ծարրաքար:

* Հեղինակաւոր ուսումնական բառարանն
Bouillet կը գրէ « Calamine . . . , elle a été
souvent confondue avec le carbonate de zinc
ou smithsonite ».

** Ռեյնսէն իւր բառագրքին մէջ կը բացա-
րէ բառն « Թուքիա կամ Արտոխոսմ, լա.
Թուքիա կամ Քուշիսիո, իտ. Թուքիա տեւ. Եւ-
րոս մեզ՝ Արպար, կամ Եուկիայ »: Իսկ Պարսկ.
բառարանն. ապ. Պոզոս Արապեան, 1826. կը
գրէ « Է բաղադրութիւն հոլանդեալ և ծանու-
ցեալ ամենեղուն »: Եւ իրօք ծանօթ է ամենուն
վասն զի հին աստին առով ալացաւի բուծիչ
դեղ մը կը պատրաստէին ու շատ կը գործա-
ծէին:

Ժարգոն

Ժարգոնն է Մէլյան կղզւոյ գետեզերքն գտնուած պատուական ակունքներէն մին, գղ. հոմանիշն է Zircon կամ Jarcon [հնդկական]։ Ի հայրամա այդ երկու հոմանիշներէն մին տառադարձուած է Յիրկոն*։ Ժարգոն բառը Հ. Մանուէլ Քաջունի տարիներ առաջ գործածած է իւր քիմիային մէջ և նոյնը նորայր ընդունած է. Հ. Մէնէլիշեան հարցական նշանով մը տարակուսական կամ անճիշդ կ'ընդունի Ժարգոն բառի շփոխառեալ հնչումն, բայց ըստ Պէշլէի աւելի Հ. Մէնէլիշեանի տառադարձութիւնը (Յիրկոն) անճիշդ կը թուի, վասն զի գաղ. մեծ բառապարհի հնդկական Zircon հոմանիշն Jarconի աղաւաղումն կը համարի**։ Իսկ Հ. Քաջունի կը գրէ «Առ Հնդկիս կոչի Ժարգոն (Jarcon), զոր ներուպայքի աղաւաղանօք կոչեցին Zircon, այլ մեք պահեցաք զբնիկ հնչումն ի հայրամա»։

Իրիդիոն

Ուսումնական գրոց մէջ այս նորակագմբառը կը նշանակէ մետաղական պարզ մարմին մը, որուն գաղ. կամ լատ. բառն է Iridium, և հայերէնն ասոր զուտ տառադարձութիւնն է, զոր նորայրի բառարանէն առաջ Բազմալիկ մէջ*** գործածած է Հ. Ս. Գուրգէն։ Հ. Քաջունի իրիդիոնի յունարէնը Իրիս [Ժարգմանի ծխածան], կը տառադարձէ Իռիս, և ոչ իրիդիոն։ Բայց իրիդիոն բառը աւելի ներդաշնակ հնչելով, բառարանաց և ուսումնական գրոց մէջ հանրացած է գործածութիւնը։

Իսլանտաքար

Հանքերու մէջ այն ապականման հանածոյին որ գրութեան մը վրայ գրուելով գանոնք կրկին կը ցուցնէ, այս անունը սեփականուած է, թէեւ անունը իւր նոյն

* Հանքաբանութիւն, Վիեննա 1897։
** «Zircon (par corruption de jarcon). Pierre précieuse...»
*** Բազմալիկ, 1853 էջ 60։

**** Բառ. պրոպ. 1826. «Լաժվէրտ, Գոնազմ, է քար իմն յայտնի և ծանուցեալ, որ արապա-

յատկութիւնը չի ցուցնէր։ Հանքս իւր անունը առած է Իսլանտ երկրի անունէն, ուր առատութեամբ կը գտնուի. գղ. Spath d'Islande և իտ. Spato d'Islanda կը կոչուի։

Լաբրադորաքար

Կը ստուգարանի Լաբրադոր [գաւառ Ամերիկայի] և քալ։ Միածանի տեղով գեղեցիկ Արատոյ վեժ մ'է։ Գաղ. կոչի Labradorite. Այս և ասոր նման հնչումն ունին և այլ լեզուաց սոյն բառի հոմանիշք. ամէնն ալ կոչած են անուամբ այն գաւառին ուր շատ կը գտնուի։

Լազուարթ

Ի գիրս և ի բառագիրս այս պատուական ակն զանազան հոմանիշներ ունի, զոր օրինակ Լաժվէրտ, Լաճվէրտ, Գոնալմ, Լիզուրիոն, Ղիզիրովն, Լաճվարտ, Լաժուարտ, Լաջուարդ, Լաժուարդ, Պարտիզարք, և այլն։ Լազուարթը վերջնադարեան նախնեաց գործածած բառ մ'է, և տառադարձութիւն պարսկ. لاجورد Լաժվէրտ [լաժ=զվ=ուէ=արտ=թ] հոմանիշին, որ արաբանալով կոչուած է Լաճվէրտ****։

Լազուարթի անունց տարակուսելու կրնանք ստոյգ հոմանիշներ ընդունել Լաժվէրտ կամ Լաճվէրտ ըստ վերոյիշեալ մեկնութեան. իսկ Լաճվարտ, լալուարդ, Լաժուրդ և Լաժուարտ նոյն բառերուն նման և տառադարձութեան փոքրիկ տարբերութիւն մ'ունենալով, համահաւասար Լազուարթի ճիշդ հոմանիշներ են, և Պարտիզարքը Լազուարթի անխալ հոմանիշ ըլլալը նորայր Բիզուարդին արդէն իսկ տարիներ առաջ ցուցուցած է*****։

Մեր ոսկեդարեան նախնեաց գրոց և թարգմանութեանց մէջ կը պակսին Լազուարթ և ասոր համահնչակ հոմանիշք։ Այժմ այս պարսիկ-հայ բառն ճշգրտութեամբ կը սեփականուի եւրոպական Lazuliteի որ է Lapis-lazuli։

Վերջ Լազուարթի իբր հոմանիշ յիշեցնիք Գոնալմ, Լիզուրիոն, Լիզիրովն։ Այս ամէն բա-

ցուցեալ ասի لاجورد Լաճվէրտ»։

***** «Lapis կամ Lapis-lazuli Պարսիկաքար... վկայ. «Պարսիկաքար. Լազուարդ քար»։ Բժշ. - «Լաճուարտ... Հայերն այսոր պարսէզքար կոչ ապեն»։ Ամրտ. Անգ. անպ»։

ներն գործածուած են նախնեաց զրոց մէջ
բայց պիտի ցուցնենք թէ զգաւ ոչ են հո-
մանիշ Լազուարթի այլ տարբեր հանքերու
անուն*։

Մեք անծանօթ է պատճառն՝ որով Լա-
զուարթի հոմանիշ կը համարուին Գոնազմը,
Լիգուրիոն, և այլն. զուցէ, երկուքն եւս մի
և նոյն գեղեցիկ կապոյտ գոյնն ունենալով,
իրարու հետ չփոխուած են, բայց այս են-
թադրական, որով ոչ գոհացուցիչ փաստ մ'է։
Հախնեաց զրոց մէջ Գոնազմը սեփակա-
նուած է յն. *ליגוריון*, լւ. *Ligurius*, զգ.
Ligure հոմանիշ բառին. բայց մեզ ծանօթ
բնօրայական հեղինակաւոր բառարաններու
մէջ *Ligure* կամ *Ligurius* բառն բնաւ *Lap-
is-lazuli* Լազուարթի հոմանիշ չի համա-
րուիր, այլ զանազան ու տարբեր ինքնքր,
որով եթէ կը ներուր բնորու, կը սխալինք
Գոնազմ և Լազուարթ հոմանիշ ընդունելու**,
և նոյն իսկ բոլորովին սխալ է Լիգուրիոն, Ղի-
գորովմ Լազուարթի հոմանիշ ընդունիլն, վասն
զի այդ բառերն լինելով Գոնազմ բառի յու-
նարէնին տառադարձութիւն, կ'անջատուին
Լազուարթէն ինչպէս Գոնազմը։

Խնդիր է արդ, Գոնազմ և Լիգու-
րիոն, հոմանիշ բառեր են, թէ տարբեր։

Այդ երկու բառերն ալ գործածուած են
նախնեաց զրոց և թարգմանութեանց մէջ,
ինչպէս կը տեսնենք յետագայ պարբերու-
թեանց մէջ։

* Մեր մեծ բառարաններու մէջ Գոնազմ
և Լազուարթ հոմանիշ համարուած են, « Լա-
զուարթ... ըստ ոմանց նոյն ընդ Գոնազմ... »
Հ. յ. կ. բառ. — « Լազուարթ. բառ այլապէս Գո-
նազմ. ա. լաճիվէրն. » Զախնեայ Հայ-Խա.
« *Lapislazzoli*. Գոնազմ. (ակն ինչ կապուտակ՝
ոսկեգոյն երակօք. ի սմանէ կազմեն զազնի-
կապուտակն՝ անուանեալ *Oltremarino*) յաճի-
կէքոտ. » — Զախնեայ, Խաւ-Հայ. — Այս բառա-
բաններէն զատ նաեւ վերջերս հրատարակուած
Հ. Քալաշուոյ բառարանին մէջ Գոնազմը Լա-
զուարթի հոմանիշ ընդունուած է։

** Աստի վերջնադարեան նախին Առաքել
վարդապետի յետագայ վկայութիւնն իսկ կա-
րելի չէ անխալ ընդունիլ. « Գոնազմ» որ է
Լազուարթ, երկնից գունովն՝ է կապոյտ և
լաւն այն է՝ որ տամարոտ և ոսկեփայլ չլինի
և ի կրակէ զգոյնն չփոխէ՝ և ոսկի նոցատներ
(այսպիսի օտար բառեր գործածող նախին մը,
կենար գոնազմը չարաւարթին հետ յիշխու-
ուենայ, և թէ ի թ(ք)եղապի քուրն ձգես զա-

« եւ կարգմ երրորդ՝ Գոնազմ և ակաւոն և
ստակալ » . ելք. ԽԸ. 19։

« Καὶ δ στίχος δ τρίτος ΑΙΤΥΡΙΟΝ [ի-
ղիւրիոն], ἀχάτης, ἀμέθυστος » .

« In tertio *LIGURIUS*, achate, et ame-
thystus » .

Լէշտ =] **לִישׁוֹן הַשְּׁמֹר** »

« **לִישׁוֹן וְאַחַת** » [Գոնազմ

Այսպէս ի Ս. Գիրս ուրիշ երկու պարբե-
րութեանց մէջ [ելք. ԼԹ. 12. եղեկ. ԽԸ 13]
կը յիշուի Գոնազմ բառը որուն միշտ հոմա-
նիշ գրուած են երբ. ՕՄՂ, լւ. *Ligurius*,
յն. *ליגוריון*. և բնաւ յունարէն կամ եւ-
րոպայական բառն տառադարձեալ չէ։ Էթէ
Լիգուրիոն հոմանիշ ըլլար Գոնազմի, նախնիք
անշուշտ այդ պարբերութեանց միոյն մէջ
փոխանակ միշտ մի և նոյն բառն յիշու-
ղայն կը գործածէին։ Ս. Պրքի մեր թարգ-
մանութեան մէջ այդ բառի յիշատակութիւնը
չենք տեսած, և ուսկից ի բառարանս նոյն
բառը հոմանիշ կը համարուի Գոնազմի, ան-
տարակոյս պատճառը « Տօնական մատեան » ին
մէջ եղած հետագայ յիշատակութիւնն եղած
է. « Յեղորդ կարգմ՝ առաջին ակն Լիւիգի-
րոն** » . Տօնական մատեանս յիշատակել կ'ու-
զէ Ելիք ԽԸ. 19 « եւ կարգն երրորդ գոնազմ

զուարտն նա նոյն ժամն ոսկեփայլ և լինի որ-
պէս զձին, և ի ֆռական մաղպուլ է. և մեծ
մեծ կտոր լինի, և հազար դրամ կտոր տեսի.
և վեց հարիւր դրամն ի Ռձ. Թուրք ծախու-
ցաւ ի Հալապ՝ տասն և հինգ ոսկաւ, և յա-
ռաջմէ քառասուն ոսկաւ էր ծախուէր. յՈղբէկն
կու գայ »։ Պատմութիւն Առաքել վարդապետի,
էջ 456։

*** Տօնական մատեանէն կը տեսնեմք որ Լի-
գուրիոն ոչ միայն Գոնազմի հետ կը շփոթուի.
այլ և նոյն իսկ ուրիշ զանազան հանքերու
կամ ակունքներու հետ. նոյն մատեանը կը
գրէ. « Լիւնգրիոն, (Լիգուրիոն) որ է Եղեղա-
նաքար. Զորար գիւտն ոչ ուրեք ի պատմա-
դրաց ուսար. յայտ է թէ յակունքն է սա։
Թարգմանի զիգորոն անասուն զիգորոն կոչե-
ցեալ, և զոյնն իւր նման է եղին որթոյ. և
կամ ոեւաւ երնջոյ. իսկ ագի ոտրա փոքրիկ գո-
լով՝ ունի ոսկաւ կրկնութիւն զեղնագոյն. վասն
որոյ և զիգուրոս կոչի, որ է եղին ագի, և է
քարս այս եղնզան (կամ եղեղան) գունով »։

և ակաւտ, և սուտակ » պարբերութիւնը, որուն առաջին հանքն կամ ակն Գոնազմն է։ Այս վկայութիւնը բացայայտ կը ցուցնէ որ « Տօնական մատեան » ի մեր նախնի հեղինակներն Գոնազմ և Լինգրոնն կամ Լիգուրիոնն հոմանիշեր ընդունած են. բայց այս վկայութեան աւելի կարեւորութիւն կը տրուէր եթէ վկայողը ոչ վերջնադարեան այլ հինգերորդ դարու կամ Մ. Գրգի թարգմանիչ հեղինակներն լինէին։

Լինգրոնը Գոնազմի հոմանիշ համարելու օրիշ հակասութիւն մ'ալ կայ. այսինքն սոյն Լինգրոնն անուամբ՝ կը հասկնան այն հանքը՝ որ ըստ առասպելին Լուսան (Lynx, *Felis lynx*) կենդանւոյ միգէն գոյացած է*։ Բայց սոյն հանքը Ս. Գրոց մէջ յիշուած Ligurius, λυγύριος բառին հետ նոյն համարին պարզ անհարգական է**։ Իսկ ըստ Թեոփրաստի և Պլինիոսի, այդ հանքն չէ Լինգրոնն այլ

Կայծի Escarboucle նման հանք մ'է. ոմանք ինչպէս Ս. Յակիման և Ս. Հերոնիմոս Հոսիք յակիմի Hyacinthe la belle հանքը կը կարծեն։ Տարակոյս չի կայ որ Ligurius հանքը այս յիշեալ հեղինակաւոր անձանց յիշատակած հանքերէն մին պիտի ըլլայ քան թէ ոմանց կարծած Սիգուրիոնն որ ըստ առասպելին՝ անշնորհք գոյացուցութիւն մ'ունենալով չէր կրնար Հրէից քահանայապետի լանջանոցի՝ սրբազան և շնորհալի զարդէն ըլլալ***։

Արդ նոյն իսկ այս վերջին վկայութեան այսինքն ըստ Պլինիոսի, Թեոփրաստի, Հերոնիմոսի և Ս. Յակիման « Տօնական մատեան » ի մէջ յիշատակուած հանքէն տարբեր ըլլալով, կարելի չէ զայն Գոնազմի հոմանիշ համարել ****։

Վերջոյեւի կամառօտ քննադատականէն անշուշտ կարելի է եղբակացնել. թէ Լազուարի, Գոնազմ և Լիգուրիոն չեն հոմանիշ բառեր, որով և ոչ մի և նոյն հանքերը, այլ առանձին ու տարբեր։

Հ. Ս. ԵՐԵՄ.

Շարայարելի



ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

(Շար. տես էջ 401)

* « Լիգրոնն. ակն ինչ պատուական. ըստ նախնեաց՝ կարծի գոյացեալ ի միգէ Յովազի, (ի մօ լուսան) որ այն ինքն է Lynce անուանեալ կենդանին »։ Ջարջիսի Հայ-իտ. բառ. Իսկ Հայկադ. կը գրէ. « Լինգրոնն... բառ յն. Լինգրոնն (որպէս թէ մէկ կամ ազի լինգս կենդանւոյ, կամ յովազի »։

** Միեւր կը գրէ « *Ligure... Quelques-uns on prétendu que c'était la même que lyncurius, ou pierre de lynx, qui se forme, dit-on, de l'urine du lynx... Mais cela est fabuleux* »։

*** Այդ հանքին վրայ զրուած էր Գաղայ անունը։

**** Ականց գրքի հեղինակը մանրամասն կը նկարարէ Լաժվերտի յատկութիւնը, որը եթէ Լաժվերտը [Լազուարի] նոյն ըլլար այն առասպելական գոյութիւն ունեցող հանքէն հետ, նա իւր աչքէն չէր վրեպեցնէր այդ առասպելներն, քանի որ ամէն հանքերու մասին եթէ առասպելի մը կայ զայն զարդարելով նկարագրած է, բայց միայն յետագայ նկարագրութիւնն է՝ ինչ. « Յաղագս գիտոքեան Լաժվերտ քարին... Այն եւս տեսակս ունի, և որ ինչ բարեգոյն իցէ՝ այն է, զի քար բազում ընդ ինքեան խառնեալ ոչ էրէ և զընդին կէտանիշն նորին ոչ կարիցեն տեսանել և ամենայն որ գտազոյ և անուշ երանք և ի նմա սպիտակ քար սպաւազոյն իցէ, այն տեսակ լաւագոյն է և մատեն նորա է ի յերկիրն Պէտէիւլանի »։ Յետոյ կը յիշէ Լաժվերտի բժշկական զանազան յատկութիւնները։

ԱՄՍՍԻԱ. — Երբեմն հոշակաւոր քաղաք Պոնտոսի Երկրորդ Հայոց սահմանին մօտ, և այժմ՝ գլխաւոր քաղաք համանուն գաւառի։ Եփեսոսայ 33° 32' արեւելեան երկայնութեան և 40° 39' հիւսիսային լայնութեան մէջ, 72 հզրմ. Ելրկիային և 147 հզրմ. Սիբաստիային հետու, գրեթէ նոյն ուղղութեան վրայ, Հաղորդակցութիւն ունի այս կրկին քաղաքաց և Սիւ ծովու հետ՝ Սամսոնէ խարբերդ եղած կառաքնաց ճանապարհով։ Քաղաքս բարձր է ծովու մակերեւութէն 405 մ. և կը տարածուի արեւմուտքէ արեւելք, սեղմուած յովտի բուսականութեամբ զարդարուած հովտի մը մէջ, զոր կը կազման Քայի-տաղը և Չախալի լեռներ։

Քսան և հինգ գարեթէ ի վեր ծառօթ Ամասիան, այն սակաւագիւտ քաղաքներէն է, որ